


ՏԻՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ  
Ե. ԹՈՐՕՏՅԱՆ

Նամակ կամ սր եւ է  
գրու թիւն պէտք է ուղղել առ  
ճեօրին: ԱՐՇԱՆՈՅՍ ԳՐԱԳՐԻ  
ԳԱԶԻԷ (եգիպտոս)



ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏ ՈՒՆ ԶԱՐԱՐ	
Տարեկան սոյ դրոշմ	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԻ	
Տարեկան ծրարիք	20
Վեցամսեայ	12

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՈՒԿ  
Եւ թղթատարի ծախքը  
Խոնարարութեան վրայ է:

Խոնարարութեան ուղղութեամբ  
գրութիւնք եւ չ'են տրուիր

Ս.ՉԳՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ  
Կանխիկ վճարելի են

B. TOROSSIAN  
Direc.-propr. du journal arménien  
ARCHALOUYCE  
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԶՈՐԵՔԵՍԱԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

ԳԱՍՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍԷՁ

Ինչպէս յայտնի է ժամտախար իւր ուրոշեալ պայմանագրական ժամանակին կուգայ կ'երեւի եգիպտոսի մէջ. Առողջապահական վարչութիւնը կը փութայ տեղեկագրերով համաճարակին ներկայութիւնը ուր որ անկ է, և վարչութեան կողմանէ ամեն օր հրատարակութեան կը տրուի պատահած ժամտախարի դէպքերը:

Un cas de peste constaté, և այլն ասոնց կը յաջորդէ Երոստական կառավարութեանց կողմանէ քառանթէնի հաստատումը:

Համաճարակ մ'ալ տեղային-գլորոցական շրջանակին մէջ սկսած է, և հաւանական է թէ Ազգ. Առողջապահական վարչութեան օրինակին իր դիւանատունէն ելնելիք պաշտօնական թղթերուն վրայ նշանակէ հետեւեալը:

Քննիչի դէպք մը հաստատուած  
un cas d'examineur constaté

Բայց ազնիւ ընթերցողը թող չ'այլայլի. այս վերջին համաճարակը վտանգաւոր տեսակէն չ'է, և հետի է սպառնական երևոյթ մը ու նենալէ. վարժարանը հակաճեխելու և կամ հոն երթեալուց քառանթէնի ենթարկելու ինդիւր չ'կայ, և ասիկայ աւելի վտանգութիւն կը ներշնչէ որովհետեւ ցոյց կուտայ թէ ձեռնհաս մարմինը գործին մէջ վտանգ մը չի նշմարեր: Բայց անսնկք թէ ինչ է պատահածը:

Միջազգայ մը եկած է վերջերս համեմեակ տեղոյս Գալստեան վարժարանի ամալ վերջի քննութիւնները. քննիչ սնն — որ ի մտցածիս նայելով հոգաբարձութեան անդամներէն մին է եղեր — բարոյագիտութեան քննութեան միջոցին, 14-16 տարեկան աղջկան մը հետեւեալ հարցումը կ'ուզէ. « Գծեցէք անբարոյականութեան սահմանները »: աշակերտուհին չի պատասխաներ: յաջորդ օրը աղջկան հայրը, վերաւորուած զգալով ինքզինքը, վարժարան կ'երթայ տեսչէն բացատրութիւն պահանջելու, հոն իր և նախորդ օրուան Պ. քննիչին մէջ փոքրիկ վէճ մ'ալ տեղի կ'ունենայ:

Ահա բոլոր պատմութիւնը երկու բանով:

Երկու կողման թողով վերաւորուած անձնատիրութիւնները — եթէ կան — բուժելու գործը, ևս կը դառնամ ուղղութեամբ հարցմանը:

Այս տեսակ հարցում մը անտեղի է թէ ոչ:

Նախ քան թէ յանձին Պ. քննիչին գործին մէջ կանխակալ կարծիք մը փնտռելը տղայական կ'երեւի ինձ. տղայական է նոյնպէս ըսելը թէ մասնաւոր նկատումներով է որ այդ տեսակ հարցում մը ուղղութեամբ է:

Գործին մէջ այս վերապահութիւնը ընդունելով հանդերձ, անտեղի կը նրկատեմ ուղղութեամբ այդ հարցումը. որովհետեւ աշակերտուհին կարենալ պատասխանելու համար այդ հարցման պէտք էր որ իւր ուսուցիչը դասի միջոցին խօսած լինէր իրեն անբարոյականութեան վրայ և դժած անոր սահմանները. յետոյ — ինչպէս սովորութիւն է — եթէ Պ. քննիչը տեսնելով աշակերտուհին չի պատասխանել ինք փութար և նոյն միջոցին պատասխաներ, հաւանական էր որ գործը գայթակղելի ձև մը չ'ստանար:

Ինչ և է. բարեբաղդաբար գործին մէջ վտանգ չ'կայ. թող այս միջադէպը տեսակ մը դաս լինի ազագայ քննիչներու ուղղէն զի աւելի շրջանայեայ լինին իրենց հարցումներուն մէջ:

Ինչպէս բարեկամներէս մին իրաւամբ դիտել տուաւ, աշակերտը վարժուած լինելով իրենց ուսուցչաց հարցմանց ձևին, արդեօք լաւագոյն չի լինիր եթէ քննիչը իրենց հարցումը դասատուին միջոցաւ ուղղէն աշակերտին, և այսպէսով կարգ մը անտեղութեանց առաջքն առնուած լինի:

ՅԱՐ. Լ. Ս. ՇԱՄԼԵԱՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԸ

ՈՐՈՎԱՅՆԱՀԱՏ ՃԷՔԸ

Անշուշտ մոռցուած չ'է այդ տարօրինակ մեղադրութիւնները, որոնք 1888 ի թերթերը կարգապէս են կը յիշեն այդ տարօրինակ հրէշը, որ անձեքակալելի մնացած է դեռ և որուն միակ sportը մասնաւոր խրանաբով կ'ինքերու որովայնը կարել էր...

Մայիսի 28 ին Լոնտոնի միջ տուած մը պատահած է, որ յար և նման է որովայն

նահատ ձէքի սծիրներուն. արդեօք այդ մարգարտոյց հրէշը որ 1888 էն ի վեր վրան խօսել տուած չ'է, նորէն վերադարձած է Լոնտոն. այդպէս կը կարծուի:

Ամենի ալ կը հաստատեն թէ Հուայդ չէփըլի սծիրը ճիշտ ու ճիշտ կը նմանի այդ որովայնահատին գործած շարք մը սծիրներուն և կատարուած է ձէք որովայնահատին ամենավերջին եղեւնը կատարած վայրէն քանի մը մէթը հեռու. ճիշտ այն տեղը ուր այդ հրէշը 1888 նոյեմբերի մէջ վերջին անգամ իր « գործը » կատարեց դժբաղդ Մէրի Քէլլի ի վրայ:

Եւ տարօրինակ բան Մօթթիւնս Եարտի հին ստիկանները ու լրտեսները, անոնք որ 13 տարի առաջ կատարուէն հալածեցին նողկալի մեղամուրը, կը յայտարարեն թէ շարժած օրուան սծիրը բացարձակապէս միևնոյն պարագաներու տակ գործուած է և կատարուած « գործը » սխալելու աստիճան կը նմանի որովայնահատ ձէքի ձեռքի արդիւնքին:

Ոճրին վայրը Տօրոթթ Սթրիթ գարշելի անել փողոց մըն է Հուայդ չէփըլի ամենէն աղտոտ և ողորմելի թաղին մէջ:

Ամբողջ օրը անել փողոցը գրեթէ ամայի է, գիշերներն է որ միայն հող կը վրտան Լոնտոնի սմեղատորին և ամենագարշելի սծրագործները, մարդաուպանները և սրիկանները, որոնց համար Հուայդ չէփըլ երկրորդ հայրենիք մըն է:

Շարժ գիշերը Աննի Օսթին անունով 28 տարեկան կին մը անելին վարձու սենեակ տուողներէն մէկուն ներկայացաւ մարդով մը ընկերացած, սրուն ու ըլլալը դեռ չ'զիտցուիր: Գիշերուան համար նկուզ մը վարձեց քանի մը բէնիսով մ'չ մէկ ձայն, ոչ աղաղակ և ոչ իսկ կուռի ձայն լսուած է գիշերը, միայն կիրակի առաւօտ երբ վարձատուին բոլոր յաճախորդները մեկնեցան և ինք ալ կը պատրաստուէր դուռը գոցելով հեռանալ, յանկարծ հծծիւններ լսեց որք վերէն կուգային:

Վեր ելլելով սենեակին դուռը բացաւ և հոգեվարքի խանդիւնի մէջ անկողին վերայ տարածուած տեսաւ գիշերուան վարձակալուհին: Որովայնին վրայ ունեցած վերքերը ստակալի էին և շատ ահուելի եւ նրկարագրելու համար, ճիշտ մարդուս կը յիշեցնէին որովայնահատ ձէքի զոհներուն վերքերը:

Կինը անմիջապէս Լոնտոնի հիւանդանոցը փոխադրուեցաւ, ուր քանի մը ժամէն մեռաւ. միայն սա բառերը արտասանելով

« Ե՛հ Աստուած իմ սրբաբ կը տառապիմ »  
 Մօթրիկն Եստի բոլոր ստիկանները  
 ստքի վրայ են , բոլոր սեքսիթիաները և  
 մանուսանդ 1888ի ճարպիկ խուզարկաները  
 մէջտեղ ինկած են . թաղին բոլոր գարշա-  
 հատ նկուզները խուզարկուած են . խնդիրը  
 կը կնճռուի , որովհետեւ ոճրագործին նկա-  
 րագրութիւնը ( signalement ) չ'ունին . վար-  
 ձատուն միայն սա կրցաւ ընել թէ Աննի  
 Օսթրիկի ընկերը արծաթէ մատանի մը սնէր  
 մատին վրայ :

Անկորը ահագին ցնցում տուց ընթաց  
 է Լոսանի մէջ . ուր գեւա մուցուած չ'են  
 որովայնահատ ձէքին շահատակութիւնները :

**ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆԵՐ**

Հետեւեալ նամակը և նուիրատու-  
 թեանց ցանկը նոր Լոսան-Բնիկերցատուն  
 Բնկերութեան Պատ . Գործ . Ժողովը գրկած  
 է ի հրատարակութիւն :

- Պատ . Տնօրէն « Արշալոյս » Լոսանի  
 Աստ  
 Լոսան-Բնիկերցատան Գործ . Ժողովը  
 կը խնդրէ որ հաճիք ազգասիրաբար հրա-  
 տարակել հետեւեալը , կանխաւ ընդունելով  
 մեր շնորհակալեաց հետ նաև մեր յարգա-  
 նայ հաւատին .

- Ի Գիմաց Գործ . Ժողովոյ  
 Ատենագլխի Ատենագլխո  
 Ա . ՉԱՐԵՀԵԱՆ Ս . ՕՏՈՊՈՆԵԱՆ

**ԼՍԱՐԱՆ-ԲՆԻԿԵՐԿԱՏՈՒՆ ԲՆԻԿԵՐՈՒԹԻՒՆ**

Լոսան-Բնիկերցատան Գործ . Ժողովոյ  
 հաճելի պարտք մը կատարած կը համարի,  
 ընկերութեանս երախտագրութեան զգաց-  
 մանց հաւատարիմ թարգմանը հանդիսանա-  
 լով , հանդէպ հետեւեալ ազնիւ ազգայիննե-  
 րու որոնց նուիրատուութիւնները իրախու-  
 սեցին մեզ մեր գողգոյ նախաքայլերուն  
 մէջ , ընկերցատան բացման առթիւ :

**Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն**

ANCH' IO SON UOMO  
 (ԵՍ ԱՎ ՄԱՐԳ ԵՄ) (5)

Գ .  
 Հոգիմէական կաթոլիկ մը , ճշմարիտ հա-  
 ւատացեալ անուան արժանանալու համար ,  
 պէտք է ըլլայ նախապաշարեալ : Այն որ այս  
 պայմանը չ'ընդունի , չ'կրնար ըլլալ հարազատ  
 զաւակ չեղմէական եկեղեցւոյ :

Ճիշտութեամբ թէև չ'ունին այն միջավայ-  
 րին , որուն մէջ սաղարկած էր մինչև իր ծե-  
 բութիւնը՝ ժամանակ ունեցած չ'էր յիշեալ ե-  
 կեղեցւոյն զաւանանքին հետեւելու , բայց եւ  
 այնպէս բոլորովին ազատուած չ'էր այն նախա-  
 պաշարային տպաւորութիւնէն , զոր իր ծնողքը  
 օրրանէն սկսեալ ներմուծած էին անոր ծուծե-  
 րուն մէջ :

Հետեւաբար երբ դուրը զարնուեցաւ ճիշտ  
 այն միջոցին , ուր մեռեալ մ'էր խօսակցութեան  
 նիւթը — եւ այն ալ գիշեր աստի , աղօտ կան-  
 թեզի մը կիսամիտ լոյսով — ամբողջ մարմնովը  
 սարսեցաւ , ծունկերը կիսոտեցան եւ աթոռի մը  
 վրայ ինկաւ :

— Հոգի՛ն . . . մրմնչեց խղճ մարդը :  
 — Ի՞նչ , հոգի , հարցուց Մարիէթթա :  
 — Կամ ուրուականը . . .  
 — Ի՞նչ ուրուական :

ԳՐԱՄԱԿԱՆ ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Մեծ . Տիար Առաքել Պէրպէրեան	150	դր.
» » Աեգրաք Օտապաշեան	100	»
» » Կիրակոս Շահրոզեան	60	»
» » Կարապետ Երզնկացեան	40	»
» » Արտաշէս Յովնէփեան	40	»
» » Յակոբ Բիւրքճեան	40	»
» » Արմենակ Էրմէքճեան	20	»
» » Սարգիս Գարբնեան	10	»

Ընթեցատուն բացման օրը պնակէ գոյացած  
 զանազաններէ 79 »

**ԹԵՐԹԵԿ**

Գեր . Այվազեան սրբազան , մէկ տարե-  
 կան « Սուրհանդակ » « Մասիս » և « Արեւել .  
 Մամուլ » :  
 Տիար Առաքել Մ . Պէրպէրեան »  
 « Անահիտ » « Հայ Եկեղեցի » և « Երթում »  
 « Նազարէթ Ազգաբարձ » մէկ տարեկան  
 « Արեւել »  
 « Արմենակ Էրմէքճեան » « Նոր-Կեանք »  
 « Հայկ Գաղտնիքներ » « Լոյս »  
 « Վահան Ատէշեան » « Բրո-Արմենիա »  
 « Ոճ » « Արմենիա »  
 « Բրիտան . Թէպէքեւն » « Չայն հայրեն-  
 եաց »  
 « Սեգրաք Օտապաշեան » « Les Annales  
 Politiques et Lit. »

**ԳՈՅԲԵՐ**

Տիար Առաքել Մ . Պէրպէրեան , մէկ  
 արժէքաւոր նորահար լաւբար : Տ . Սրբառ  
 Բիւրատ ( նախապէս նուիրած ) մէկ դրա-  
 սեղան : Տ . Եգուաչու Գարազալ , մէկ պա-  
 հարան : Ազգային Առաջնորդարան , մէկ  
 թիկնաթու :  
 Ենթահալուութիւն նոյնպէս այն ազնիւ  
 ազգայիններուն սրտնք այս առթիւ նուիրե-  
 ցին այլեայլ գրքեր . նուիրատուներու ա-  
 նունները արձանագրուած են Բնկերութեա-  
 նըս առանձիններուն մէջ :

ԱԶԳ  
 Կը ծանուցուի Արգոյ հատարակութեան  
 թէ՛ Լոսան-Բնիկերցատունու բաց է երեք-

շաբթի , հինգշաբթի և շաբաթ օրերը երե-  
 կայեան ժամը 7 էն մինչև 11 . իսկ կերակի  
 օրերը՝ առաւօտեան ժամը 10 էն մինչև գի-  
 չերուան 11ր :

Գիւտն Գործ . Ժողովոյ  
 ( Կնիք )

**ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ**

— Հոնրածանօթ վաճառականներէն մին  
 անցեալ օր իր ընտանեօք ճամբորդելու վը-  
 րայ էր Խոնվական նաւով , որ ժամը 4 ին  
 պիտի մեկնէր Պիւրէօնի համար :

Վաճառականը իւր կնոջ և աղջկան ըն-  
 կերացած փողոց իջաւ , և կառք մը փնտը-  
 ուելու համար իրեններէն քանի մը վայր-  
 կեան բաժնուեցաւ , առանց ինկատի ունե-  
 նալու որ գոց և կազմ ու մեկնելու պատ-  
 րաստ շանս մը իր տան դռնէն քանի մը  
 քայլ անդին կ'ուպասէր :

Յանկարծ աղջիկը նետուեցաւ շանսին  
 մէջ , որուն դուռը բացուած էր զայն ըն-  
 գունեղութեամբ համար և ձիերը քառասորակ ըս-  
 կան արշաւել :

Գժբաղդ հայրը բնականաբար իր ճամ-  
 բորդութիւնը յետաձգելով ի զուր փնտը-  
 ուեց իր աղջկան հետքերը :

Թէպէտեւ շանսն վարող կառապանը  
 ձեռք ձգուեցաւ , բայց նա չ'կրնար կամ  
 չ'ուզեր ըսել երկու մանուպարհորդաց . . .  
 ուր գտնուիլը :

Կը կարծուի թէ , կ'ըսեն , երիտասարդ  
 աղջիկը ինչպէս նաև անոր ընկերացող երի-  
 տասարդը Ալէքսանդրիոյ շրջակայքը , աւե-  
 լի Ռէմլէի կողմերը , առժամապէս տեղ մը  
 հաստատուած են և կեանք իւր աղնաւոր  
 աղա . . . կ'աղաղակեն :

Աղջկան հայրը իրեն պատկանած գեւա-  
 պանատան զանգատած է պարտ ու պատ-  
 շածին տնօրինութիւնը խնդրելով , որ կը  
 յուսացուի թէ առեալ զձեռն եւայլին պի-  
 տի ըլլայ :

— Այո՛ , մանկան հոգին կամ ուրուականը  
 Այս առաջին գիշերն է . կ'ըսեն թէ մեռեալ մը  
 իր մահուան օրէն սկսեալ երեք օր երեք գիշեր  
 կ'այցիլէ իր սիրելիները , պատասխանեց ծերու-  
 նին՝ գողահար :

— Զանոնք ան ու գողի մէջ ձգելու հո-  
 մար , տարօրինակ սէ՛ր . ո՛հ , ի՛նչ վարդապետու-  
 թիւն , եւ որքան պիտի խնդայի եթէ նուազ  
 սրտաբեկ ըլլայի :

Սակայն դրան բաղնուած կը շարունակէր ,  
 հետզհետէ տելի ուժգին :

— Օ՛հ , ելէ՛ք , ըսաւ Մարիէթթա , հայր , եւ  
 դու ձիւզէքքէ . դուրը բացէ՛ք . եւ առջեւ պիտի  
 տեսնէք ճիշտ մեղի յար և նման մարդկային  
 էակ մը :

Ձիւզէքքէ քանի մը քայլ առաւ , բայց ան-  
 շարժ տեսնելով ծերունին , ինքն ալ ետ կ'ստեցաւ :  
 Վախը , մանուսանդ ողջմտութեան հակառակ եւ  
 ծաղրելի վախը տարափոխիկ է արամարանելու  
 անվարժ դանկերու համար :

— Ինչո՞ւ կեցար , հարցուց Մարիէթթա :

— Գիշերուան այս ժամուն եւ այս օրին ո՞վ  
 կրնայ գալ , եթէ ո՛չ ինչպէս ըսաւ մեր հայրը :

— Գիշերուան այս ժամը եւ այս օրը աւե-  
 լի պատճառներ են փութալու : Ո՞վ գիտէ ո՛ր-  
 պիտի թշուառ մ'է , որ մեր աջակցութեան կը  
 գիմէ . Օ՛հ , շուտ ըրէք . ես ալ կ'ընկերանամ ձե-  
 զի :

Բայց ծերունին կը գողար , եւ տեղէն չ'էր  
 շարժեր : Նա անգամ մը — իր անտիութեան մէջ  
 — լսած էր որ մեռեալները այցելութիւն կու-

տան կենդանիներուն . եւ կը յամառէր այդ ը-  
 սածին վրայ , որ իրեն համար գաղտնիք մ'ե-  
 ղած էր : Շօշախելի , կենդանի փաստ պէտք էր ա-  
 նոր հասկցնելու համար թէ այդ ըմբռնուած հա-  
 կարնական է եւ հակաբրիտանեական :

Հուսկ ուրեմն Մարիէթթա առջեւէն , եւ  
 ձիւզէքքէ ետեւէն ուղղուեցան դէպի դուռը :

Ճիշտութեամբ անհամբեր կ'ուպասէր անոնց ձեռ-  
 նունայն վերադարձին . ժամ ո՛չ ըլլալով որ այն  
 հոգին կամ ուրուականը , որ իրեն հարազատ  
 կենդանի անձ մը՝ անհաճ եւ անհամ խաղ մը  
 խաղացած էր իր սիրեցեալները լեզուպատառ ը-  
 նելու համար , շատոնց անհետացած էր : Ուստի  
 ո՛րքան զարմացաւ երբ Մարիէթթա եւ ձիւզէք-  
 քէ վերադարձան յամբաքայլ , գրեթէ քաշկոսե-  
 լով մարդակերպ շարժուն մասկոյտ մը , որ ան-  
 լուր ճիգեր կ'ընէր իր հաւատարակութիւնը  
 պահելու համար :

— Ի՞նչ է այս , եւ ո՛րիկէ կուգայ , հարցուց  
 ծերունին :

— Սա այն հոգին կամ ուրուականն է որ  
 քեզ կը սարսափեցնէր , հայր , ըսաւ Մարիէթթա  
 ժպտելով . իրապէս սա մարդ մ'է , զոր քաջ կը  
 ճանչնաս : Մտեցի՛ր եւ տես :

— Արգար աղան , գոչեց իտալացին . ա՛հ ,  
 թշուառական :

— Ա՛հ , այո՛ , ես եմ , մրմնաց իշխանացուն  
 նուաղեալ ձայնով մը եւ գետին գլտորելով :

— Ո՛հ , վերջապէս ձեռքս ինկար , անիծեալ  
 մարդ :  
 Ազգարանական հոգեբանութեանց մէջ ի-  
 տալացուց կը սրուի վրէժնորդութեան անհաշտ  
 ոգի :

—Փանախարհի երեք նոր գեղքեր եւ արձանագրուած են վերջին 24 ժամու ընթացքին մէջ ի Զակաղիկ : Վարդապետները տեղացիներ են . 28 հիւանդներ կը մնան տակաւին տեղային հիւանդանոցը :

—Բոր-Սայիտի մէջ ծաղիկախտի հետքեր երեցած են վերջերս :

—Շինութեանց նախարարութիւնը վճարած է 30 մէթր երկայնութեամբ մի կամուրջ ձգել Ապպարիէի մօտիկ Իսմայիլիէի ջրանցքին վրայ :

—Առաջիկայ գեղտեմբեր ամսուն եւրոպացիներու թաղերուն մէջ անձրեւի ջուրերուն համար բացուած ջրուղիները պիտի աւարտին :

Կառավարութիւնը 10,000 սուլույ գումար մը յատկացուցած է այս շինութեանց համար որ առաջիկայ տարի ալ պիտի շարունակուի արարական թաղերու մէջ :

—Ապրիլ 7 էն մինչեւ Յունիս 20ը բուրբ եգիպտոսի մէջ ժանտախտի 78 դէպք պատահած է , որմէ 23ը մեռած են :

—Վերջին օրերուս մէջ ետեւէ ետեւ երկու գիշերներ սաստիկ կուրծներ տեղի ունեցած են Գաֆէի մը մէջ տեղացի էֆէնտիներու եւ եւրոպացիներու միջեւ . վերջին գիշերը կուրծ այնչափ սաստիկ եղած է որ քաղաքիս կառավարիչը եւ փոխնսրու հըրամանատարը ոստիկաններով ստիպուած են կուռ վայրը վազել : Կուռ պատճառը . — հասկանալի է — եղած են կիներ . . . 12 վիրաւորեալներ կը հաշուուին եւ ձերբակալութիւններ տեղի ունեցած են :

—Ֆրանսական Գարօզ փխիչներ (Յունիս 14) ազգային տօնը այս տարի եւս արտասովոր շուքով պիտի կատարուի Գահիրէի մէջ . յատուկ մասնախումբ մը արգէն սկըսած է զբաղուիլ այդ առթիւ կատարուելիք հանդէսի կարգադրութիւններով : Էօզպէքի պարտիզին Պուլաքի կողմի զուռը պիտի վարդարուի երկու բարձր կամարներով : Մուտքի կիշէն ետեւ պիտի ձեւացուի սիւնազարդ մեծադիր սրահ մը Լուի Ժերգ . ի

ոճով , լուսեղէն դռնեցիներ եւ հազարաւոր զամբոյններու մէջ ողորդուած պարտիզի բուրբ ճախարհներն ու բաւիշները պիտի գեղազարդուին առատ լոյսերով եւ աւելի քան 5,000 դրօշակներով : Երամշտական երկու ամբիօնները նոյնպէս պիտի զարդարուին շուայլ ինամբով : Արհեստական լոյսերը եւ բազմաոտեակ հրթիռներ արգէն ապսպրուած են ֆրանսայէն : Մուտքի տասները այժմէն ի վաճառ հանուած են ի գին 10 դահեկան ողջի :

—Տեղական կառավարութիւնը 1600 սուլու վճարում մը ըրած է Ս . Գորգի ծովային ճամբով փոխադրութեան համար :

—Հանրային Պարտուց վարչութիւնը 40,000 սուլույ գումար մը յատկացուցած է Զիֆթայի կամուրջին կառուցման համար :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

«Արշալոյս» ի Տպարանէն ճաշակաւոր տպագրութեամբ լոյս տեսաւ , նորին Ս . Օժութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոս Վեհափառ Հայրիկի երկատիրութիւնն «Վերջալոյսի Զայներ» , սրբմասին արգէն խօսած էինք ասկէ առաջ :

Հ Ե Ռ Ա Պ Ի Ր Ն Ե Ր

Լինարա 20 Յունիս . —Պ . Չէմպրէյն ծանր յողատապէ կը տառապի եւ տունը մընալու դատապարտուած է :

Կ . Պօլիս 20 Յունիս . —Սուլթանը երկուշաբթի օր պիտի ընդունի Յունաց նորընտիր համախարհային Պատրիարքը :

Բեթէրպուրկ 20 Յունիս . —Չարը հաճութեամբ ընդունած է Սերպիոյ թագաւորին այցելութեան ծրագիրը :

Կալկաթա 20 Յունիս . —Օգնութեան կարօտ սովեալներու թիւը կ'ստուարանայ , հասած է 510,926 ի :

Փարիզ 20 Յունիս . —Պ . Տէլքասէ ընդունեց Մարօքի դեսպանները :

ցութիւն , որուն օղակները կտրուած են այն չարամաղթութիւններէն , զոր ըրիւր այս մտրդուն նկատուած : Ուստի կրնամ հետեւցնել որ Աբգար ազան' իր մէկ զարմելի արարքով աւրիններ առաջ անդիակցաբար սպաննիչն եղաւ մանկան մը որ դու գոյութիւն չ'ունէր : Եւ հիմայ չարայարեց Մարիէթիւն , նախ մեր հիւրը մեծարեւը եւ հանգստացնենք , մնացեալին վրայ յետոյ կը խորհինք :

Աւելորդ է ըսել թէ այս միջոցին իշխանցուն անփուշ վարդերու վրայ չ'էր զանուեր :

Ոստիկաններուն ձեռքէն հազիւ պրծած , շնորհիւ մի պազանի զբան , զոր սարիներէ ի վեր կը գործածէր օրինաւորութենէ մի քիչ զուրկ գործողութեանց համար , եւ անձրեւի սակ ու աղմուրու մէջ ժամերով թափառելէն ետքը վերջապէս երբ պատասպարուելու վայր մը գտած ըլլալու ուրախութեամբ կը մտնէ յարկի մը տակ , ինքզինքը դէմ առ դէմ կը գտնէ անձի մը հետ , զոր յանիրաւի տպակամ էր , եւ որ ի յրունն չարեաց' հիմայ մարդասպանութեամբ կ'ամբաստանէր զինք :

Աբգար ազան' որ քաջութեան հետ երբէք յարաբերութիւն ունեցած չ'էր , կ'զգար որ մեռնելու մօտ էր , Զղջացած էր արգէն հոն մտնելուն , բայց գուրս ելնելու հնարը չ'էր գտնիր : Եւ արգէն ոտքի վրայ կենալու ուժ չ'ունէր : Ուստի պաղատագին եւ արտասուալի աչքերով օգնութիւն կը հայցէր Մարիէթիւնէն :

—Բայց ո՛չ , գոչեց ծիրօլամօ , ես քու ազնուութիւնդ եւ ներողամտութիւնդ չ'ունիմ , Մարիէթիւն . լաւ չ'ըմբռնեցի քու փրկստփայլու-

Փարիզ 20 Յունիս . —Մերակոյտը ընդունեց ընկերակցութեանց օրէնքին 13րդ . յօդուածը , որ կ'արդիւլէ տոանց օրինաց թոյլտուութեան նոր միաբանութեանց հաստատումը :

Փէքին 21 Յունիս . —Լուր կը շրջի թէ չորս Պէլժ տաւքեղութիւններ եւ շատ մը տեղացի քրիստոնեաներ ջարդուած են ներքին մասերուն մէջ :

ԱՅԺՄԵՆՈՒԹԻՒՆ

Հետզհետէ կը տեղեկանանք թէ՛ Գալստեան վարժարանի մէջ անցեալ օրուան հոգաբարձու-ծնողական միջադէպին մէջ սահմանափակուած չ'է եղեր ինքիւրը : Կ'ըսուի թէ անկէ առաջ հոգաբարձութեան դէմ հանրագիր մը պատրաստուած է ծնողաց կողմէ եւ Պատ . Բաղաք . Փոզովին մատուցուած , որուն զեռ հետեանք մը տրուած չ'է : Արդարեւ կ'արժէ կարծենք այս խնդիրը ուսումնասիրել :

ՀԱՅՎԱԿԱՆ ՍՐՃԱՐԱՆ

«ԿՌԱՆ ՔԱՅԷ ՇԻՇԱ»

Էզպէքիէ , Սրբնախտ պատի դէմ , Տիար Գառնիկ Սիրունեանի սեփականութիւնը Էզզոյն հաստատութիւն' որ Գահիրէի ամենէն զեղատեսիլ եւ ամենէն օղտուեն գերբը կը գրուէ , սչ միայն միջազգային այլ նոյն իսկ հայկական ժամագրավայր մը հանդիսացած է :

Սպասարկութեան մասին ցոյց տրուած փոյթըն , ըմպելիաց մաքրութեան համար տարուած խնամքն ու զինքու չարաւորութիւնը ուրիշ ո՛չ մէկ տեղ կարելի է տեսնել : Հոն' ամեն ճաշակ իր գոհացումը կրնայ գտնել :

Օտար լեզուաւ լրագրաց հետ կը գոնուին հայերէն ամեն թերթեր :

ԿՌԱՆ ՔԱՅԷ ՇԻՇԱ հասցէով եկած նամակներն եւ աւանդներն անմիջապէս կը յանձնուին իրենց տէրերուն :

Վերջապէս միայն մէկ անգամ այցելողը կ'ընտրէ սոյն Սրճարանը ընել իր ամենօրեայ յաճախովայրը :

ԿՌԱՆ ՔԱՅԷ ՇԻՇԱ  
Էզպէքիէ , Սրբնախտ պատի դէմ

թիւնդ , բայց կարծեմ ըսել ուզեցիր որ սա հրբէշը չ'է մեր փոքրիկին մահուան պատճառ : Ես քեզի համամիտ չ'եմ , եւ կը պնդեմ ինչ որ առաջ ըսի : Այս գազանը տպակակեց , ինքն ալ պիտի ապաստուի . մեացուց , ինքն ալ պիտի մեռնի : Օ՛ն , ձիւղէրբէ՛ , եկուր ինձ օգնելու :

—Ընդհակառակն քովէս մի՛ հեռանար , սիրելիս , ըսաւ Մարիէթիւն :

Երիտասարդ ամուսինը կը յորդէր ամեն կամքն անոր որ զինք որդեգրած էր , եւ կ'սքանչանար իր կնոջ՝ Մարիէթիւնի՝ ուղղախոհութեան եւ կրօնի վրայ :

—Հայր , ըսաւ , կ'աղաչեմ , համբերէ քիչ մը եւ Մարիէթիւնային մտիկ ըրէ՛ :

—Ո՛չ , ո՛չ , շատ ու շատ համբերեցի :

Եւ սպոստոյի դէմքով մը քայլ մ'ուտաւ . զէպ' Արդար ազա , որ մոյրորեալ աչքերը տպին անդին կը յածէր՝ խեղակորոյս :

Մարիէթիւն վազեց եւ Իտալացուոյն տոջու կենալով հեզնական շիշտով մը գոչեց .

—Օ՛ն , արիասիրտ մարդ , վաղեմի զինուոր ազատասէր Իտալիոյ , օ՛ն յառաջ անցի՛ր . զար'կ , սպաննէ անձ մը , որ' ո՛ր' գիտէ որպիսի պարագաներու բերմամբ ինքզինքը քու պաշտպանութեանդ տակ գրաւ , քու հայրենեացոյ ազատարար գրօշակը գրկեց :

Ա . ՊԱԿԱՆ

(Շարունակելի)

ծիրմլամօ՝ ի սես այն մարդուն , որուն կը վերագրէր մանկան մահը՝ զայրոյթէն կը կատաղէր : Դէմքին վրայ միւսնոյն ժամանակ կ'արտայայտուէր մի չարագուշակ ուրախութիւն , երբ կը մտածէր թէ իր թշնամին ինքնսրբաբար , գիշերով , հաւանակահաբար առանց որ եւ է անհատի մը գիտութեան , եկած ինկած էր հոն , իր ոտքերուն տակ : Ուստի գիտելի դաւաթներ կը պարպէր անընդհառ :

—Մարգասպան , ունաց ծերունին , ո՛ն , որպիսի հաճոյքով գլուխդ պիտի ճզմեմ ոտքերուս տակ :

—Հայր , ըսաւ Մարիէթիւն , սես մարդուն վիճակը եւ պիտ' ճիւղմով շարախուած եւ մինչեւ ոսկիները թրջուած է . պէտք է փոխել ըզպետար , պէտք է սաք բան մը խմցնել . խեղճը կը դողայ :

—Թո՛ղ ստակի , բացապանչեց ծերունին , վատ մտնկասպանը :

—Մարգասպան , մանկասպան , մըմոաց Արգար ազան հազիւ լսելի ձայնով մը , նո՛ն . . .

—Այո՛ , գուն , նողկալի էակ . . .

—Հայր կը չափազանցէ , ըսաւ մանկաւ մարդ կինը . բայց պէտք է ներողամիտ ըլլալ , վասնզի խիստ վշտացեալ է :

—Ի՞նչ , ներո՞ւմ կը խնդրես , գոռաց ծիրօլամօ :

—Այո՛ , բայց կ'աղաչեմ , զիս մի՛ ընդմիջեր , հայր : Կ'ուզէի հասկնել Արգար ազային որ այն անարգանքին , զոր քեզի ըրաւ տարիներ առաջ , եւ այն կակիծի մէջ որ այսօր մեր սիրտը կը կրծէ կայ մի խորհրդաւոր կապակ-

ՏՅՎՐ . Ա . Յ . ՔԵՐԻՍՈՒՅԵԱՆ

Ի՞նչ գլխի բը նարս գլոտ-Պէյէ փոխադրած լինելով ի Տահէր, նարս Պիրքէթ-էլ-Բաթլը, ֆրէրներու վարժարանին դիմաց, կը ծանուցանէ իր արգոյ յաճախորդաց որ յետ այսու իր խնամոց պէտք ունեցողները հաճին գիմել վերոյիջեալ տեղն ուր կը գտնուի կէս օրէ առաջ ժամը 9-11 և կէս օրէ յետոյ 3-5 :

ԳՐԱՇԱՐԻ ՊԵՏԲԸ ԿԱՅ

Ու՞ր են մեր գործ փնտռող և չ'կայ ըսողները :

Երկու վարժ գրաչարի պէտք կայ . մէկը «Արշալոյս» ի, և միւսը Հրատարակչական Բնկերութեան» համար . ամսական 80-120 ֆր . գիմել «Արշալոյս» ի Խմբագրատունը :

Ուսանող գրաչարներ ալ կ'ընդունուին :

ԱԶԴ

ԱՐՇԱԼՈՅՍԻ Տպարանէն ըյս տեսած է ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ գիրքը՝ որը տարիներէ ի վեր սպառած էր : Այս ութ ու կէս երկսունակ մեծագիր ֆորմալով գիրքը Գահիրէի Հայոց Հրատարակչական Բնկերութեան երախայրիքն է : Գինն է երեք ճրԱՆԻ :

ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՈՐ ԲԱՌԱԳԻՐԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ

Ս Բ Ա Ն Ս Ա Հ Ա Յ

ՓԱՐԻՉ 1901

Սոյն ընդարձակ Բազմաբր, սրուն Առաջին Հատարը 1061 մեծագիր երկուներէ բաղկացած և բազմաթիւ պատկերներով զարդարուած հրատարակ ելած է և կը պարունակէ A-H գիրերը, կը վաճառուի ի Գահիրէ . գիմել ի Պէյն-էլ-Սուրէն Հայոց Եկեղեցին ,

ՕՐ . ԲՐԻՍՏԻՆԷ ԳԱԶԱՉԵԱՆԻ

ՍԹԱՌ ԼԱՅՓ

ԼՈՆՏՈՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնեալ 1843

Բացարձակ ապահովութիւն . — Չափաւոր ապահովագրի . — Ապահովագրի հնութեան համաձայն շահու առաւելութիւն . — Իրաւանց պահպանութիւն՝ ապահովագրի վրձարմանց յապաղումի պահուն . — Չափող պարագաներու մէջ անմիջական հաշուեյարգարութիւն . — Շահու բաժանում ամեն Հինգ ՏԱՐԻՆ մէկ անգամ :

Ս . ԼԻՅՆԱՐ

Ընդհանուր ներկայացուցիչ եղիպտոսի

ՀՅԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱՔ 22 ՅՈՒՆԻՍ 1901

8644	3667	524	2302	5346	56
578	948	1089	1221	3050	3236
4176	4185	4506	4916	5469	6337
6717	7118	8002	8485	9020	9242
	9452	9561	9910		

Տպարարիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալարի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն , Պրիսթլ Օթէլի ճիշդ գիմաց , Գաթէ Տը Լա Պալարի կից :

Հին եւ նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՒՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ 6500 ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԸ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐ ներն են ևւ ստանցմէ մինչև ցաւոյ 17,000,000 ծախուած է :

400 և աւելի վկայականներով ևւ մեայններով վարձատրուած , Երաշխատեալ մեքենաներ ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական առուեսահանդիսին մէջ ստացած է :

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ


ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԴՂՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

ԱՐԲՈՒՆԻՐԻՆ

ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՅ

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԱՅԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ , ուշագրութիւն գարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐ ի յաճախելին :



Չրի գասեր և նորոգութիւններ , ՍԻՆԿԵՐ մեքենայ յից համար , յաճախորդաց տուներուն մէջ :

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւն հին մեքենայից ևւ նորոգութիւն ամեն կաշի մեքենայից

ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՌԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 563 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արգէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ սրէէ ընկերութեան մէկ միլիար աւելի է :

ԳԵՈՐԳ ԵԿԱՒՕՑ ներկա յաղուցիչ ի Գահիրէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ և է ընկերութեան աւելի երաշխաւորութիւններ , ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ :

ԱԼԷԲՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործակատար յ'Ալեքսանդրիա :

ԿՕՇՎԱԿԱՐ

Գ . ԵՒ Յ . ՊԵՇԻՐԵԱՆ ԵՂՐԱՐԻ

Պագար-Մարտր ք/ա 39

Կ'ուզէ՞ք ունենալ հմուտ վարպետի ձեռքէ ելած , ֆրանսական նորաձեւութեանց համապատասխանող , սոքերը կոշտերու ցաւերէն ազատ պահող և գիմացկուն կոշիկներ :

Դիմեցէ՛ք ի Պագար-Մարտր թիւ 39 խանութին մէջ հաստատուած Պէշիրեան եղբարց , որոնց գործածած ապրանքներու տուկանութիւնն և ձեւերու մասին ունեցած հզգամութիւնը ամեն տարակոյտէ վեր է :

Պէշիրեան եղբարք իրենց յաճախորդաց ըրած յանձնարարութիւնները փութով և մեծ խնամով կը պատրաստեն :

Իսկ միայն մէկ անգամ գիմել իրենց . ապահովագրէ մնայուն յաճախորդ պիտի լինիք :

ԲԱՐՈՒՏԻ ԸՆՏԻՐ ԱՆՈՒԹ

Ունէին՞ք մինչև ցարդ հայ մը որ գիտնար մտածել թէ՛ ածուխն ալ մեծաքանակ սպառում կ'ունենայ և կրնայ կարեւոր շահ արտադրել : Առեւտուրի այդ ապարհեղն ալ օտարներուն թողուած էր :

Տիար Յակոբ Վարդանեան ( Սանտեանի քեռորդի ) այժմ ամենաբնաւոր ածուխի վաճառահանութեամբ կ'ըրտղի և մրցում բացած է օտարներուն դէմ :

Դիմեցէ՛ք իր միջնորդը Սուր-Սուտար թիւ 17 և 18 :

Անխարդախ կշիւ ևւ չափաւոր գին :

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ — ՍԻՄՈՆ ՅԵԼԷԿԵԱՆԻ

ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ

Գին 10 Գահեկան ողլ :